

ԻՇԽԵՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԾ ՀՈՎԻՒՄԸ

Հովիւ մը կար խնայ բարեօրհա՛
 Պաշտօնին մէջ չունէր հանգիստ -
 Հաւատարիմ կ'աշխատէր միշտ ,
 Եւ վիճակէն դո՛հ էր իւր սիրտ :
 Գլձածն Ընտանած յերկնից տեսաւ ,
 Իւր գթութեան դուռը բացաւ .
 Շտտով հովիւն եղաւ հարուստ ,
 Չէր մտածէր ալ իւր սպրուստ :
 Քանզի հասաւ աւագութեան ,
 Հասարակաց եղաւ իշխան .
 Կանգնեց պարսա մը հոյաշէն ,
 Շքեղ էին կահերն ամեն :
 Բարեկամներն յաճախակի ,
 Յայց կ'երթային շորհաւորի .
 Բայց երբ դո՛հէն դուրս կելէին ,
 Օարմանք պատէր զամենեւին :
 Հետաքրքիր եղան հարցին ,
 Հարտացեալ այն իշխանին .
 « Ի՞նչ մեկնութիւն արդեօք ունի
 « Օյգ տրեխը դրան ետեւի :
 — Ըտոնք , ըսաւ իշխանն արդար ,
 Նախկին կենացս եւս ազգարար .
 Արբան մտնեմ դո՛հէն էլիմ՝
 Հոգեական ինզճ կեանքս յիշեմ :
 Չը խրոխտամ վերայ այլոց ,
 Չը կարծեմ զիս ժառանգ գահուց ,
 Չը ճարակուիմ յսխտէն գոռուց ,
 Ար ջանեմ վերջն աւանդ սփոսն :
 Ինչպէս շատերն երբ վիճակին
 Բարւոք տեսնան շուտ կը փոխուին .
 Յոխորտանօք կը փրքանան ,
 Կրելով ոգի վատ ետութեան ,
 Ընչուչա գձուծ մ'էի յառաջ .
 Տէրքն ըրաւ զիս իշխան քաջ .
 Նորա շորհիւ հասար փառաց
 Կը վայելեմ այժմ առատ հաց :
 Վուցէ կրկին մերկացրնէ
 Օխա իւր շորհած բարիքներէ «
 Վուցէ մտոնէ միանգամայն
 Քան զառաջինն թշուառութեան :

Աւտի ինչո՞ւ հասարակաց
Իսպառ մերժեմ՝ բրած հայցուած,
Ինչո՞ւ խեղճին շիժն արտասուաց
Շուտ չը սրբեմ իբր հայր գթած — :

Աւտի ո՞վ դու աղիկար մարդ
Ղանչկի բարիքն որ ունիս արդ
Տրեին հովուին առ օրինակ
Յիշէ՛ նախկին վիճակդ անարգ ք

Յ. Ս. Կեօրիկեան

Յաջորդ խոսով խորացած նամակ ահա
իւ հրատարակին ք :

ՆԱՄԱԿ ՊԵՐԼՈՒՆԻՆ

ԵՒ

ՅՕՂՈՒԱԾ

Արդարև շատ քաղցր էր ինձ պան
գխտութեանս մէջ մեր հայրենակից
ներին հետ գննէ զըռցելով արդիւ
նալից նիւթերի վրայ միխթարութիւն
գտնել : Եւ ահա այս մասին Վերսի
մէծն Կպիսկոպոսը, երբ բարեհաճիլ էր
չնորճ բերիլ այս տեղ, մի ամենայաւ
մար միջոց տուաւ, պատու իրելով թէ՛
երբեմնապէս պատուական « Սիոն 7
ամսագրի թերթերում ցանկալի կը լին
նին բովանդակելու զանազան, մեր
վիճակին յարմար նիւթեր, որոնք առ
հասարակ Լեւոստական լեզուներից
պարտաւորեցայ քաղիլ կամ թարգմա
նել, ինչպէս Վերմանիերէնից այս հե
տեւեալ նիւթը գործաւորների հարցի
վրայ, որ մեծ չափ է առիլ և առնում
օր ըստ օրէ : Արեմն խնդրուեմ ներ
կայացնել, եթէ բարեհաճիք (1) Սիոն պար
ամսագրի թերթերով նամակիս հետ

տու այժմ այս հետեւեալ նիւթը մեր
հայրենակիցներին :

Վիտի Վերագրութեանը մտերմ
բարեկամ Միտի Տ. Գ. Միւրաշեանց
Վերին—Ագուլցի :

Սիւն Գրամագիւղ և Գործարարութեան մէջ :

Այս տարուայ սկզբից սկսած՝ Վերս
մանացուց ընկերական յարակցութիւն
ներում մի բոլորովին նշանաւոր յեղա
փոխութիւն եղաւ, որի աղղցեցութիւ
նով բազմացան գործատուները և ա
ռաջ գնային : Արանից անմիջապէս այն
հետեւեցաւ, որ մի կողմանէ դրամա
գրուիւր քիչ ձեռք մտաւ և աշխատան
քի համար՝ գործ գրուեցաւ, միւս կող
մանէ դրամագլխոյ մեծ զորութիւնը
ճնշեց ձեռագործների վիճակը և գոր
ծաւորների մեծ մեծ խուճրը կենդր
նայրեց արհեստագործութեան մի մի
կէտերում : Այս հակադրութիւնը այ
ժամ անտեղն է հասիլ, որ այսօրուայ
օրը քաղաքական հասարակութեան
մէջ, այսպէս ասել դեռ միայն երկու
դասակարգ կայ, որոնցից մինը փար
թամութեան մէջ հրձուում է, այն ինչ
միւսը այնչափ աշխատում է, որ կա
րողանայ մարդու արժանաւորութեա
նը համեմատ ապրիլ : Այս երկու դա
սակարգը կաղմուէն կարուածաւարե
րը և գործաւորները : Այս խիստ հա
կադրութիւնը դրամագլխոյ և գործա

(1) Առ այժմ ներկայ յօդուածը անփոփոխ հրա
տարակելով Սիոնի Վերագրութիւնը կը յուսայ, որ
Պ. Միւրաշեանցը այսուհետեւ առաւել ընտրի միան
գամայն մեր ազգի կարտութեանցը, համապատաս
խան յօդուածներ կը իրիկ :